

ԲՈՒՆԵՅ ԳՐԶԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԶԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ

(Շար. տես Բազմ. թիւ 1-2, էջ 10)

ՄԱՍ Գ.

ԲՈՒՆԵՅ ԴՊՐՈՅԻ ԳՐԶԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ:

Մեր գլխաւոր աղբիւրը եղած է Լալայեանի Վասպուրականի ցուցակը: Չեռագիրները չենք տեսած, իսկ Լալայեան կը բաւականանայ լոկ հասարակ «Գիր բոլորգիր» որակով:

Հ. Տաշեան իր աննման ցուցակին մէջ Բաղտասարի Աւետարանին (ցուցակի թիւ 72) գրչութեան մասին խօսելով, Ամիթ գրուած, կը ցուցակագրէ «Գիր բոլորգիր մեծ ու հաստ, բայց կանոնաւոր»:

Եւ այսքան է գրչութեան մասին մեր գիտցածը: Գրական տեսակետով շահեկան է յիշել որ, գլխաւորաբար Ներսէս քահանայ Աւետարանները զարդարած է ոչ միայն ծաղիկով և մանրանկարներով, այլ և յանգաւորաւ յիշատակարաններով: Մասնաւոր գրական արժէք մը չունին, միօրինակ գրեթէ կրկնութիւններ են: Սակայն ինչպէս որ պիտի տեսնենք այլուր՝ հետեւողներ ալ ունեցած է:

Յիշատակարանին տաղաչափեալ հնագոյն օրինակը սակայն իր ամբողջութեան մէջ բուն թուանց գրուած Աւետարանի մը մէջ չէ որ կը գտնենք՝ այլ Կիրակոս գրչէ Սպահանեայն տակ գրուած աւետարանի մը մէջ, 1585ին: Այս ձեռագիրն է որ տասը տարի վերջ Բոլենց գիւղին մէջ Ներսէս քահանայէ կը ծաղկուի՝ երբ ան կը կցէ նաեւ իր ոտանաւոր յիշատակարանը:

Եւ հոս կ'արտագրեմ ամբողջ յանգաւորաւ յիշատակարանը, սակայն բաժնելով

իմ կողմէս մասերու առ ի զիւրութիւն ցուցմունքներու:

ՄԱՍ Ա. ... Ուստի տեսեալ սորա զայս Լալայեանի խորհուրդ՝ Յովսէփ, Շալիւ, Շաղաւաթ, Լուան ըզբան ի սուրբ գրոց Լալայեանի երանութեան Եւ զընտանեքն հոգեւոր. Որ է գիրք աստուածաբան: Այնու պընդեցին զյոյս յԱստուած, Գրեւ է ետուն զաւետարան, Ինժիլի հոգեւոր և մարմնեց Եւ լուսատու որդեւոր մարդկան: Վարդապետաց՝ քանոն ճարտար, Քահանայից՝ վարք սըրբութեան, Մարգարէից՝ գուշակումն, Առաքելոց՝ քարոզ և բան: Ճըգնաւորացն՝ ուսուցանող, Մարտիրոսացն՝ զէն ամբողջութեան, Սուրբ կուսանացն՝ զարդարիչ, Թագաւորաց՝ վարք բարութեան, Քրիստոնէից միահամուռ՝ Ուսուցանող յամենայն ժամ: Աւետարանն է Թագաւոր Եւ ամենայն գիրք զօրական. Աւետարանն է քաղցր աղբիւր, Որ ամենայն մարդ զովանան:

ՄԱՍ Բ. ... Որք ընթեռնուն կամ տեսնեն, Բողոք սրտիւ զողորմի տան: Պարտ է ոսկով զբողոք կազմել, Որ ճարտարաւ կոչի անուան, Լուսանըման քաղցրատեսիլ Որպէս զանմատոյց խորան: Ոսկի տփերը նըման է ՅԱստուածածին կոյս Մարիամ. Բանքը՝ որ ի ներս կայ գրեալ՝ Քրիստոս խօսի յաւետարան: Յառաջ գըրած ըզծաղկութեան Լալայեանի անօրինական.

Չաւետեքն Գաբրիէլի, Որ քաղցր խօսէր առ Մարիամ. Ուրախ էր սուրբ Տիրամայր, Տուն և տեղի աստուածութեան. Քրիստոս ի քեզնէ ծընանի, Զմեղըս Թողու որդեւոր մարդկան: Եւ զՔրիստոսի ծընունդ յայրն Եւ ի մըսուրն, որ մոգք եկան. Եւ զքառանօրեայ գաղութան ի տաճարն սողոմնեան: Ըզմըլըրտիւն ի Յովհաննէ Քրիստոս ի գետն Յորդանան, Եւ ելանէն ի Թաբօր լեռան, Որ առաքեալքն զարմացան: ԶՄովսէս ի մեռելոց բերեալ, ԶԵղեայ՝ ի դասէն անմարմնական. Ըզյարութիւնըն Ղազարու Մարթայ հայցէր և Մարիամ. Քրիստոս զընթեռնեմ խոնարհեալ՝ Եկեալ Ղազարու գերեզման. Յաւանակաւ յերուսաղէմ Եկեալ Քրիստոս աւծեալ արքայն: Վըկայ եղեն եբրեցիք՝ Մանկունքն և ծերքն պատուական: Ի վերնատունն պատարագեաց, Որ յայտնաւէտ ամեն տեսան. Զոտըս լուաց զաշակերտաց, Խոնարհութեան եգէր պայման: ԶԽաչելութիւն, ի գերեզման՝ Զաւերութեան գրեթէս, Եւ զսոսկալի աւր յարութեան, Զսոսկալի տեսիլ հրեշտակին Եւ Թափուր տեսին զգերեզմանն: Ըզհամբարձումն Քրիստոսի Եւ զիջում ի վերնատան. Հոգին իջեալ աղանակերալ, Առաքեալք շնորհիւ զմայլեցան: Զտէրունականն խաչ ցուցեալ, Գայ իջանէ ի Գողգոթայն. Զսոսկալի աւր դատաստանին, Զմեղաւորացն տանջանքն Եւ զարդարոց տեղն անման: Զհամբարձումն Ժ(տաս)ըն խորան Եւ ըզսնէր զանաղան, Զամէն ոսկով պարտ է ծաղկել, Նըման է յանմատոյց խորան: Ապա սկսանէ ի Մատթէոս, Յառաջ գընէ զԳիւրգըն ծնընդեան.

Մարիոս՝ Սկիզբն աւետարանի Յիսուսի Քրիստոսի, որպէս գրեցան: Ղուկաս ասէ՝ Քանգի բազումք Յօժարեցին վերջստական: Ի Յովհաննէս աւետարանիչն Գոչմամբ ասէ՝ ի սկզբանէ էր Բան ՄԱՍ Գ. ... Զայս մեծ գանձ աստուածային Տեսեալ՝ Յովսէփ, Շալիւ ու իշխան, Շաղաւաթ, Զանիկ և Ամըրջան: Ապրանդար, Խըլղաթ և Մուրատ-Ջան. Շալիւ կինն՝ Գուհար, մայր՝ Շուշան. Պարոն Յովսէփ, որդիքն՝ Խըլղաթ, Եւ Ստեփանոս, կինըն՝ Սուլթան, Շաղաւաթ, կին՝ Շայում, որդիքն՝ Վար- [գան. Զանի-բէկ կինըն՝ Խան-աղա, որդիքն [Թուամջան (*). Մուրատ, կինըն՝ Հաղրավարդ, որդիքն՝ Մերիջան. Իշխան, որդիքն՝ Սիմէոն, կինըն՝ Բէկի-Ջան Գեաւիլ քահանայքն՝ բարեմիտ և [արքայան՝ Զտէր Կարապետն հանճարեղ Եւ զտէր Աբրահամ պատուական Եւ զամենայն ժողովուրդս՝ Որ կամակից են բարութեան Զայս և զկանայս, զծերս և ըզտղայս, Ըզմեծ և զփոքր զամենեւեան. Լըսող լինել Եկալք ձայնին Եւ արժանի արքայութեան: * * * Յիսուս Քրիստոս, անմահ արքայն, Յորժամ փառօք դաս հայրական՝ Նըստիս յաթոռ դատողական. Քաղձրածայնես քո ծառայիցն՝ Որ ըստացան զաւետարան. Զպարոն Յովսէփ աստուածասէր Եւ զիւր եղբարքն պատուական՝ Շալիւն, զՇաղաւաթն, ըզԶանի-բէկ և [գիշխան, Եւ զիւրեանց բարի կանայքն՝ ԶԳուհար, զՇայում և ըզՍուլթան. Ընդ քո սըրբոցն պրսակին, Ընդ վարդապետս երկոտասան.

(*) Ստացողներուն և իրենց պարագաններուն անունն չենք հն:

Զոր անջնջ յիշատակ մնայ
Յայսմ հետէ մինչ յաւիտեան:
Որք ընթերցողն, կամ տեսանեն
Բոլոր սրբաւ զօրորմի տան:
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք ըզմեզ արժան:
Դուք յիշեալ լիցեք յԱստուծոյ՝
Լըսել ըզձայն երանութեան: -
Եւ Աստուծոյ մարգարէին՝
Փառք և պատիւ միշտ յաւիտեան:

ՄԱՍ Դ. ... Մարդեցաւ աւետարանս
Ու ու խի (1595) էր թուական.
Ի գեղըն՝ որ Բոլենց կոչի,
Ի գուռն՝ է (եթը) սուրբ Նըշանացն.
Ընդ հովանեաւ սուրբ Գեորգեայ
Որ զօրավար էր սրբազան,
Վարուքն սուրբ Լառաքինի՝
Անուանակցին իւրոյ նըման՝
Թողին սրբոյ Լուսաւորչին.
Որ հայրապետ նըստաւ յԱղան:
Հայցեմք՝ յապենիազ Տեառնէ՝
Անփորձ մընա և անսասան.
Շըբեզ փառք նա զարդարի
Ընդ վարդապետս երկոստասան.
Զգովանքն առնու ի Քրիստոսէ՝
Թէ էկ աստ հովիւ քըրանաջան:
Զծաղիկն արի ես տկար Ներսէս,
Զգիւրն Կիրակոս քահանայն:
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք զիս արժան՝
Ըզարարորդ սուրբ գըրոցս՝
Որ կոչի յիշատակարան,
Զեղբայրն իմ՝ ըզաէր Բաղդասար
Եւ ըզհայրն՝ զՄարտիրոս քահանայն:
Փառք և պատիւ Հօր և Որդոյ
Եւ սուրբ Հոգւոյն՝ յամենայն ժամ⁽²⁹⁾:
Թէ ով է հեղինակած այս ոտանաւորը,
որոշ չէ, քանի որ կը գտնուի Բոլենց գիւղէն
զուրս գրուած ձեռագրի մը մէջ: Սակայն
տասը տարի վերջ ձեռագիրը կը ծաղկուի
Բոլենց գիւղին մէջ և խիստ հաւանական
է որ յանգաւորեալ յիշատակարանը ամ-
բողջապէս այն ասան աւելցուած ըլլայ հոն:

⁽²⁹⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրա-
կանի, էջ 700-703.

Պէտք է նկատի ունենալ որ միայն Բոլենց
գիւղը գրուած ձեռագիրներու մէջ կը հան-
դիպինք այս երկարապատում յիշատակա-
րանին:

Ես խիստ հաւանական կը գտնեմ որ
նոյնիսկ ծաղկող Ներսէս քահանայ Բոլենցի
հեղինակութիւնն ըլլայ ան՝ քանի որ իր
կամ իր եղբոր կապ ունեցած ձեռագրաց
մէջ միայն կը գտնենք:

Բաղդասար քահանայ գրիչ Բոլենցի
1592ին գրած Աւետարանին մէջ կը հան-
դիպինք շատ մը մասերով նման յանգաւո-
րեալ յիշատակարանի մը՝ որուն այն մասերը
որ բոլորովին կը տարբերին նախորդ ձե-
ռագրի յանգաւորեալ մասերէն՝ հոս կու
տամ իմ բաժանումներովս:

Այս յանգաւորեալ յիշատակարանին ա-
ռաջին մասը կը տարբերի նախորդի առա-
ջին մասէն.

Դարձեալ, յիշման առնել արժան՝
ԸզԾիծանից (*) պարոն Վարդան՝
Բարեմիտ հաւատարիմ,
Գըրոց սիրող ազնուական,
Եւ զիւր եղբայրն՝ ըզՄարգարէն՝
Քաղցրատեսակ ու պատուական,
Եւ ըզմիւսն՝ Գրիգոր անուն՝
Հեղահոգի և բազմաջան.
Եւ զմահապի ճըգնող Աստուծո՝
Հոգի բարի, միտք մաքրական,
Եւ զընտանիքն զամեն ի բուն
Եւ ըզսըրբամիտըն զԱրամ:
Զպարոն Վարդան աստուածասէր
Եւ զիւր որդիքն պատուական,
ԶԻս ի-բէկ՝ սուրբ սարկաւազն,
Որ նախավկային էր նըման.
Քաղցրաբարբառ զերթ աղանի,
Սուրբ և մաքուր հրեշտակաման.
Եւ ըզմիւս մանուկն՝ Աղուպ,
Պատկերն և տիպն արեգական:
Բ(երկու) մանուկ՝ խիստ գեղեցիկ՝
Ունէր այս բարեմիտ Վարդան.
Իս ի-բէկ՝ սուրբ սարկաւազն,

(*) Գրիգոր անուն.

Սարմուս երգէր նա աննըման,
Եւ զԱղուպ՝ փոքր պատանին.
Որ Անանեանց էին նըման:

Բարի կամքըն աստուածային,
Որ հանապաղ՝ քաղցր է մարդկան,
Իւր քաղցր կամք՝ զմարդիկ փոխէ
Զընտիր ընտիրն՝ վերին խորանն:

Զայս Իսի-բէկ մանուկ
Եւ զԱղուպըն պատուական.
Որպէս քաղեն մարդիկ իւրնձոր,
Աղերս տացեն արքայական.

Բարի մահուամբ զնոսա փոխեաց,
Արար բաժին արքայութեան.
Իւրեանց ծընողքն մընացին
Ի յաշխարհի՝ յորդոցս ունայն:

Յորայ պէս համբերեցին՝
Բէկի-ջան և պարոն Վարդան.
Եղին ըզյոյսն իւրեանց յԱստուած,
Հոգեւոր որդոյս ցանկացան:

Որպէս մանուկն էն՝ գեղեցիկ
Եւ իմաստուն՝ յաջըս մարդկան.
Նոյնպէս՝ ոսկով և լաճվարդով՝
Կազմել ետուր զաւետարան,
Բըժիշկ հոգոյ և մարմնոյ,
Յոյս Լապաւէն ամեն մարդկան:

Իսի-բէկ՝ մանուկըն մաքուր
Եւ Աղուպըն պատուական,
Ըզմեզ թողին ի յաշխարհի,
Իւրեանքն առ Աստուած փոխեցան:

Տէրն տացէ արքայութիւն՝
Հանգչել ի գոգն արքայամեան.
Խառնել ի դասըս հրեշտակաց,
Մըտանել յանմատոյց խորանն:

Եւս առաւել զիւրեանց ծընողքն՝
Զպարոն Վարդան և զԲէկի-ջան,
Խառնել ի գոգնըս հրեշտակաց,
Դասել ի դասս աջակողմեան:

Պարոն Վարդան, աստուածասէր,
Գըրել ետուր զաւետարանն՝
Բըժիշկ հոգոյ և մարմնոյ՝
Որք հաւատով ի նա յուսան.

Լըսել ըզբանն ի սուրբ գըրոց
Ըզզաւակացն երանութեան
Եւ զընտանիքն հոգեւոր,
Որ է գիրք աստուածաբան:
Այնու պընդեալ զյոյսն առ Աստուած,
Կազմել ետուր զաւետարանն⁽³⁰⁾:

Յանգաւորեալ յիշատակարանին երկրորդ
մասը յար և նման է նախորդին, որով զանց
կ'ըսեմ օրինակել: Սակայն կ'երեւայ թէ
ցուցակագիր Լալայեան հաւատարիմ չէ
եղած բնագրին օրինակութեան մէջ: Նա-
խորդ հրատարակութիւնը պէտք է սրբա-
գրել սա ճշտումով և յաւելումով:

Զխաչեւութիւն, ի գերեզման
Զաւերուսն գըժոխոց,

պէտք է ճշտել և ամբողջացնել

Զխաչեւութիւն Քրիստոսի
Եւ ըզթաղումն ի գերեզման,
Զաւերուսն գըժոխոց:

Յանգաւորեալ յիշատակարանին երրորդ
մասը, զոր հոս կ'արտագրեմ, բոլորովին կը
տարբերի նախորդին երրորդ մասէն.

Աւետարան է կենսատու,
Որ կեանք շնորհէ որդւոց մարդկան.
Աւետարան աւետիք է,
Մարդիք լըսեն և զօրանան.

Աւետարան է բժշկարան,
Հոգոյ և մարմնոյ որդոց մարդկան.
Աւետարան է թագաւոր
Եւ ամենայն գիրք զօրական.
Աւետարան է քաղցր աղբիւր,
Որ ամենայն մարդ զովանան:

ՄԱՍ Ե. ... Զայս մեծ գանձս աստուածային
Տեսեալ բարեմիտ Վարդան.
Եւեալ իւրեղի փափաքանօք,
Գըտեալ ըզգըծօղս անպիտան.
Ետուր գըրել մեղաւորիս,
Որ Բաղդասար կոչեն անուն:
Զանունս ունիմ քահանայի,
Գործովըս զուր և անարժան.
Զձեզ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք զիս արժան:
Մեղսամած մատամբ ըսկսայ
Եւ ... աւարտեցի
Հոգւոյ սրբոյ յաղոցութեամբ.
Ընդ հովանեաւ սուրբ Գեորգեան՝
Որ յորջորջի Բոլենց անուան.

⁽³⁰⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրա-
կանի, էջ 726.

Ի դուռն սուրբ Նըշանին
Է(եօթը) խաչերոյն անըման.

Սուրբ Սարգիսի զօրավարին
Եւ որդոյն Մարտիրոսի,
Որք նահատակեցան ի խորասան.
Եւ սուրբ Տերամօր Աստուածածնին.
Փառք և պատիւ յամենայն ժամ:

Ձէկ աղաչեմ, սուրբ ընթերցողք,
Զվարպեան իմ յիշման առնէք արժան,
Զեղբայրն իմ ըզաէր Ներսէս,
Որ շարագրեց յիշատակարան:

Պարոն վարդան, աստուածասէր,
Որ ունիս փափաք բարութեան,
Փոխանակ որ գեղեցիկ
Ետուր ծաղկել զաւետարանն,
Քրիստոս տայ քեզ արքայութեանն
Հանգչել ի գոգն արքայական.

Փոխանակ ոսկոյն՝ որ ետուր
Զարդարել զաւետարանն,
Զարդարիս Է(եօթը) արժեան շնորհօք
Մըտանել յանմատոյց խորանն⁽⁸¹⁾:

Շնորհիւ յիշատակարանիս՝ կասկած չի
Մնար որ Ներսէս քահանայ է անոր շարա-
դրողը, քանի որ Ներսէս քահանայ իր եղբոր
ըսել կու տայ քիչ վերը,

Զեղբայրն իմ ըզաէր Ներսէս,
Որ շարագրեց յիշատակարան:

Այս վերջի յիշատակարանին հինգերորդ
մասին նման է Բաղտասար գրչի 1593ին
թուին գրած Աւետարանը, գրեալ Արղուն
կնոջ համար: Հինգերորդ մասին վեց տողերը
նոյն են նախորդին հետ, իսկ մնացեալը
հոս կը հրատարակեմ:

Ի գեղըս՝ որ Բուկնց ասի,
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան,
Ի դուռն սուրբ Նըշանին,
Է(եօթը) խաչերոյն անըման:

Զծաղիկն արի ես տկար Ներսէս,
Մեղօք լըցեալ ի մէջ մարդկան.
Զանուս ունիմ քահանայի,
Գործովս անարգ և անպիտան.

⁽⁸¹⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրա-
կանի, էջ 729.

Ըզէկս ունիմ քահանայի,
Գործովս լըցեալ աղտեղութեամբ:

Ձէկ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք զիս արժան.
Եւ զստացող սուրբ աւետարանիս՝
Հանգչել ի դոդ արքայական:

Հոս արտագրուած առաջին և վերջին քա-
ռեակները կը գտնենք նոյնութեամբ 1592ի
յիշատակարանին մէջ՝ որ ճիշտ վերը տուի,
անոր հինգերորդ մասին մէջ:

1599ին Յոհաննէս քահանայի Բուկնց
գիւղը գրած յիշատակարանը մասամբ 1595ի
յիշատակարանին չորրորդ մասէն է, սակայն
1599ինը կ'ընէ կարեւոր սրբագրութիւն մը
1595 այդ մասին մէկ կէտին, աւելի ճիշտ
յաւելում մը՝ որ որոշ կերպով կ'երեւայ
մոռցուած ըլլալ ցուցակագրէն արտագրու-
թեան առեւն:

1595ի յիշատակարանը կ'ըսէ.

Վարուքն սուրբ Լառաքինի՝
Անուանակցին իւրոյ նըման՝
Թառին սրբոյն Լուսաւորչին.

1599 ասոր սկիզբը կ'աւելցնէ երկու տող,
որոնք այլապէս անիմաստ տողերուն հարկ
եղած իմաստը կու տան:

Կաթուղիկոս Աղթամարայ՝
Տէր Գրեգորիան էր սրբազան,
Վարուքն սուրբ Լառաքինի և այլն⁽⁸²⁾:

1599ի յիշատակարանին մնացեալ մա-
սերը, ետ ու յառաջ փոփոխութիւններով
նման է 1595, 1592ի և 1593ի յիշատա-
կարաններու զանազան մասերուն, բացի
րնականարար ստացողի և գրչի յիշատա-
կութեան մասերէն, որ ահա.

Զգեւրն արար տէր Յոհաննէս,
Փրծուն գրբիչ և անարժան:
Ձէկ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք ըզմեղ արժան:

Եւ ստացող սուրբ աւետարանիս՝
Ընէս Սարգիս, պարոն Քրդման
Եւ ըզիւր աւրհնալ որդին՝
ԶԳր-աղիզըն պատուական.
Արժանի լինել Եկայք ձայնին

Եւ երկնային արքայութեան.
Ամէն ու Ռ(հազար) ամէն:

Այս վերջաւորութիւնը գրեթէ յար և
նման է 1595ի երրորդ մասին աստղանիշով
բաժնուած առաջին մասին վերջաւորու-
թեան:

Հետաքրքրական է որ հոս ալ ձեռագրիս
ծաղկող Ներսէս քահանայ՝ կը յիշէ ինք-
զինքը աւելցնելով.

Ըզարագրող սուրբ (մառնիս)

Որ կոչի Յիշատակարան⁽⁸³⁾:

Բաղտասարի 1602ի Աւետարանը, ծաղ-
կեալ իր Ներսէս քահանայ եղբորմէն, ունի
1595ի յանգաւորեալ յիշատակարանը յար
և նման առաջին մասէն սկսեալ մինչեւ
չորրորդ մասին սկիզբի հինգ տողերը: Կը
հաստատէ յաւելում ձևով որ ըրինք 1592ի
յիշատակարանին մասին խօսած ատենինս:
Բնական է 1602ի յիշատակարանին մէջ կը
տարբերի ստացողին անունը սապէս:

Տեսեալ Ստեփանոս քահանայն
Եւ որդին նորա Մէլքիսեդէկ քահանայն
Ետուն գրել զաւետարանս,
Յիշատակ իւրոց և ծնողաց իւրոց:

1602ի ծաղկող Ներսէսի յիշակարանը նոյն
է 1593ի յիշատակարանին հետ՝ քիչ մը
տարբերելով տողերու ետ ու առաջութեամբ:
Ան կ'աւելցնէ.

Ըզարագրող սուրբ գրբոցս՝
Որ կոչի յիշատակարան,
Եւ զեղբայրն իմ զտէր Բաղտասար՝
Որ գրբելով յաւարտ եհան.
Ի խնդրոյ մեծահաւատ քահանային,
Որ Ստեփանոս կոչի անւան.
Եւ զորդին իւր զՄէլքիսեդէկ քահանայն,
Եւ կողակիցն տէր Ստեփաննոսի,
Որ Գուլփաշայ ասի անւան,
Եւ զեղբայրն՝ զՀայրապետ և զմիւս,
Որ Մարտիրոս ասի անւան,
Եւ ըզօրեղբայրն որ Բուրգ
Վարդապետ կոչին յանւան.

⁽⁸²⁾ Գրացուցակ Հայերէն Զեռագրաց Վասպուրա-
կանի, էջ 755.

Զննջեցելոց մեղքն թողու
Յիսուս Քրիստոս անմահ արքայն.
Ըզկենդանէքն անփորձ պահէ
Մինչ ի վախճան...

Լսել զձայն երանական՝
Եկայք օրհնեալ հայրական:
Փառք հօր և սուրբ հոգւոյն,
Որդւոյդ պատիւ միշտ յաւիտեան:

Այսպէս անգամ մը եւս կրկնելով որ
Ներսէս ինք գրած է այս ոտանաւոր յիշա-
տակարանները:

Վերինին յար և նման է 1621ին Տէր Յա-
կոր քահանայ գրիչ-ծաղկողէ աւարտած
Աւետարանին յիշատակարանն ալ առաջին
և երկրորդ մասով: Իսկ վերջին մասը պար-
զապէս ցարդ ներկայացուած Բուկնց յիշա-
տակարաններու զանազան տողերու կամ
մասերու խառնուրդ մըն է: Հոս կ'արտա-
գրեմ այդ մասը.

Զոր անընջ յիշատակ մընա,
Յայսմ հետէ մինչ յաւիտեան.
Որք ընթեռնուն կամ տեսանէն.
Բոլոր սրբաւ զողորմին տան:
Ձէկ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք ըզմեղ արժան:
Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:
Գրբեցաւ աւետարանս

Ու ու Հ (1621) էր թուական,
Ի յերկերն Մովսէս,
Ի դաւըն՝ որ կոչի Բուկնց,
Ի դուռն Է (եօթը) սուրբ Նըշանցն.
Ընդ հովանեաւ սուրբ Գէորգեան:
Կաթուղիկոս Աղթամարայ՝

Տէր Ստեփաննոս սրբազան,
Վարուքն սուրբ և առաքինի.
Հայցեմք յապենիազ Տեսուհի,
Անփորձ մընայ և անասան.
Շըքեղ փառօք նա զարդարի
Ընդ վարդապետս երկոտասան⁽⁸³⁾:

Տարակոյս չկայ թէ ասիկա յիշատակա-
րանի շարագրութիւն մըն է որ ծագում առած
է Բուկնց դպրոցին մէջ, և անտարակոյս
հեղինակուած Ներսէս քահանայ Բուկնց
ծաղկողէն:

⁽⁸³⁾ Անդ, էջ 866.

Բոլենց յիշատակարաններու այս դպրոցին հետեւող մը՝ գոնէ ինծի ծանօթ՝ Յոհան քահանան է, որ 1638ին Աւետարան մը գրած է Խաչատուր քահանայի և Վարդան արեւդայի համար Սուրբ Գրքի և Սր. Յովաննու Մկրտչի հովանիին տակ։ Յոհան գրչէն ունինք ուրիշ Աւետարան մըն ալ Սարգիսի համար գրուած 1648ին՝ Սոկոսի երեք խորանաց եկեղեցւոյն հովանւոյն տակ։

Սակայն ինչ որ մասնաւորաբար մեզ կը հետաքրքրէ հոս՝ այն է որ 1638ի Աւետարանին յիշատակարանը գրուած է Բոլենց յանգաւորեալ յիշատակարաններուն երրորդ մասին այնքան նման, թէեւ Բոլենց դպրոցէն դուրս։

Հոս կու տամ Յոհան քահանայի 1638ի յիշատակարանին յանգաւորեալ մասը.

Փառք....

Ձայս մեծ գանձս աստուածային Տեսեալ՝ Խաչատուր քահանայն՝ Եւ Վարդան տրեղայն՝ Բազում ջանիւք յաւարտ հանին. Եդին ի դուռն սուրբ Յովաննու Եւ սուրբ Գեորգեան։

Ձոր անջինջ մընա
Յայսմ հեռէ մինչ յաւիտեան.
Որք ընթեռնուն կամ տեսնեն
Բոլոր սրբալու զոգորմին տան,
Ձէկ աղաչեմ, սուրբ քահանայք,
Յիշման առնէք ըզմեզ արժան.
Դուք յիշեալ լինէք յԱստուծոյ,
Լըսել ըզմայն երանութեան։ -
Եւ Աստուծոյ մարգարէին,
Փառք և պատիւ միշտ յաւիտեան։

Գրեցեալ աւետարանս,
ՈՁէ (1638) էր թուական.
Ի գեաւդս՝ որ Սուրբ կոչի,
Ի դուռն սուրբ Գեորգեան զաւարժարին
Եւ սուրբ Յովաննու Մկրտչին.
Կաթողիկոս Աղթամարայ
Տէր Սահակոսն էր սրբազան.
Վարուք սուրբ առաքելի
Անուանակից իւրոյ նըման,
Սուրբ Սահակոսն առաջին,
Որ Քրիստոսի վասն քարկոծեցաւ։

Հայցեմք յապենիադ Տեսնէ՝

Անփորձ մընա և անասան,
Շըքեղ փառաւք նա զարդարի
Ընդ վարդապետս երկոտասան,
Ձգովանքն առնու ի Քրիստոսէ,
Թէ եկ հովիւ քըրանաջան։

Ձաւետարանըս գրեցի
Յոհան՝ մեղաւք ի մէջ մարդկան.
Ձանունս ունիմ քահանայի,
Գործովս անարգ և անպիտան.
Ձեւս ունիմ քահանայի,
Գործովս լըցեալ աղաղակութեան.
Ձէկ աղաչեմք, սուրբ քահանայք.
Յիշման առնէք զիս արժան,
Ըզարագըրող սուրբ գըրոցս,
Որ կոչի յիշատակարան (34)։

* * *

Այս յանգաւորեալ յիշատակարանները գրական-գեղարուեստական արժէք մը չեն ներկայացներ։ Գրեթէ միօրինակ յանկերգ մըն են, բացի անկէ որ գրչին, տեղւոյն, ծաղկողին թուականին, ստացողին մասին, կենսական ծանօթութիւններ կու տան։ Ասկէ զատ կարեւորագոյն մասը բնական է իմ երկրորդ մաս կոչածս է, որ ուրիշ բան չէ բայց եթէ խրատագիր մը ձեռագիր ծաղկողներուն, անոնց ուշադրութեան յանձնելով տէրունական նիւթեր՝ որոնք կարելի է մանրանկարել, նոյն իսկ Աւետարաններու այն սկզբնատողերը, որոնք պէտք է մեծ զարդագիր ընել։

Սուր հեղինակը, ինչպէս ըսի, ըստ իս Ներսէս քահանայ Բոլենց է։ Ասիկա ինծի ենթադրել կու տայ որ ան այս յանգաւոր խրատագրով իր ծաղկող աշակերտներուն յիշողութիւնը կը թարմացնէր իրենց նկարելիք մանրանկարներուն նիւթին, կամ անոնց առաջնորդ կ'ըլլար ապագայի մանրանկարչական գործերուն համար։

(Վերջ)

Յ. ՔԻՐՈՍԵԱՆ

(34) Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրա-կանի, էջ 893-894.

ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տիւս «Բազմ.» թիւ 1-2, էջ 18)

Գ. Լ. ՈՒԽ Դ.

ԱՊԵՏԻՔԻ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒ-ԹԻՒՆԸ ԿԱՆԵՐՈՂ ԴԵՊԲԵՐԸ

Պետրոս Ապետիքի պարսկական առաջին առաքելութիւնը ծանօթացնելէն առաջ, - որպէսզի անոր դժուարութիւնները և կարեւորութիւնը աւելի լաւ կարենանք հասկնալ, - քանի մը խօսք նուիրենք իրեն նալ, - քանի մը խօսք նուիրենք իրեն ժամանակակից պարսիկ - եւրոպական յարաբերութիւններու մասին։

Երբ գերման - հռոմէական կայսրութիւնը վերջնական կերպով ուզեց իր հաշիւը մաքրել միշտ աւելի սպառնացող թրքական իշխանութեան հետ, բնականաբար պիտի դիմէր անոր ամէնէն ոխերիմ թշնամիին՝ Պարսկաստանի, որպէսզի միացեալ ուժերով վերջնականապէս ջախջախէին մահիկին զօրութիւնը։ Արդէն Պարսկաստանի համար ալ վտանգաւոր կը դառնար Ստամպուլի կայսրութիւնը։ Դեսպանական վաւերական յայտարարութիւններէ կրնանք ցուցնել թէ անկարելիութեան սահմաններուն մէջ չէր գտնուէր Օսմանեան տէրութեան վրայ միաժամանակ երկու կողմէ յարձակելու ծրագրերը. մանաւանդ թէ գրական քաղաքականութեան կարելիութիւնը կը կրէր այդ համաձայնութիւնը, զոր մենք այսօր որոշ կերպով կրնանք հաստատել։

Ապետիքի առաքելութեան նպատակն էր համոզել Շահը Գերմանիոյ կայսեր հետ միասին սկսելու պատերազմը Թուրքերու դէմ։

Ինքը չէր առաջինը որ կը ջանար շահի Շահը ի նպատակ քրիստոնէութեան դատին։ Արդէն քանի մը սերունդներ առաջ Ռոտով թագաւոր-կայսրն ալ հունգարացի մը զըրթափան Քաթալը, պատասխանելու համար Շահին «Պաշտպանողական ու յարձակողական» համաձայնութեան կոչին։ Ստեփան սոկայն չհասաւ մինչեւ Շահին արքունիքը, ան մեռաւ ճամբորդութեան տաժանքէն, ինչպէս աւելի վերջ՝ Շիւշ լեհ դեսպանը։ Երբեմնի հունգարացի դեսպանի աճիւնները մինչեւ այսօր ալ կը հանգչին կասպից ծովու մօտ՝ Լահիճանի բուրաստաններու մէջ (1)։

Վենետիկեան Հասարակապետութիւնը ժեզարէն արդէն դիւանագիտական և վաճառականական սերտ յարաբերութիւններ կը մշակէր Պարսկաստանի հետ, մանաւանդ թէ Եւրոպայի այս բարեկամական կապեր ունէր Եւրոպայի այս համակիր տէրութեան հետ. և Ապետիքի ուղեւորութենէն քանի մը տասնեակ տարիներ առաջ անկէ զինուորական օգնութիւն խնդրած էր։

Ժամանակին շահը, Աբաս Բ, որ օրինակն էր արեւելցի իմաստուն, արդար ու բարեբարոյ իշխաններու, մեծ բարեկամութիւն ունէր Ս. Մարկոսի Հասարակապետութեան հետ։ Վենետիկի ու Պարսկաստանի բարեկամական փոխ-յարաբերութիւնները ոչ միայն վաճառականութեան հոգին վրայ ալ շատ նաեւ դիւանագիտական հոգին վրայ ալ շատ օգուտներ ունէին։ Պարսկական գահակալ ընտանիքը միշտ աւելի բարեացակամ կը դէպ շնորհիւ Վենետիկի բարերար ազդեցութեան, ու մինչ իր դրացի երկիրներուն մէջ ստէպ ջարդեր տեղի կ'ունենային՝ հոն գրեթէ անվրդով կ'ապրէին անոնք։ Աբաս Բ. շատ

(1) Անոր բարատուարին, Գեորգ Թեքէթանտէրի 1690-ին երեւոյթ գործը. «Iter Persicum» վերնագրով, հրատարակուած Աւթենպուրկի մէջ, - Կամ. Շ. Շեքեր

Գաղղիացի գիտնականին երկասիրութիւնը. Bibliothèque Orientale Elzévirienne X հտ. (XII. էջ 1-120)։